Մ. Գարեգյանին
ուսումնասիրեք և տեղեկացնեք
Պ. Մարտիրոսյանին
01.12.2017թ.

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի
քարտուղարության ղեկավար
պարոն Տիգրան Մարտիրոսյանին

ՏԵՂԵԿԱՆՔ

Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան,

Տեղեկացնում եմ, որ նոյեմբերի 27-ին Երևանում տեղի է ունեցել «Կոռուպցիայի կանխարգելումը և մարդու իրավունքների պաշտպանությունը. Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (GRECO) Հայաստանի վերաբերյալ առաջարկությունների իրականացումը» խորագրով համաժողով: Համաժողովը կազմակերպվել էր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Եվրոպայի խորհրդի, ՀՀ դատական իշխանության և ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի կողմից՝ «Աջակցություն Հայաստանում դատական բարեփոխումների իրականացմանը» ծրագրի շրջանակներում:

Միջոցառմանը ներկա էին բարձրաստիճան պաշտոնատար անձինք, դեսպաններ, փորձագետներ: Համաժողովին մասնակցելու նպատակով Երևանում էր գտնվում նաև Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (GRECO) գործադիր քարտուղար Ջիանլուկա Էսպոսիտոյի գլխավորած պատվիրակությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից անհրաժեշտություն է առաջացել պատվիրակության անդամների ժամանումն ու մեկնումը իրականացնել «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի պաշտոնական պատվիրակությունների և VIP նոր կոմերցիոն սրահում՝ ձեռք բերելով 15.000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ արժողությամբ ծառայություններ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի
օգնական

Ջուլիետա Բաղդասարյան
01.12.2017